ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3163 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ՇԱՀՈՒՄՅԱՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 18 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻԼՎԱՐԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՎԱՀԱՆ ՄԻՐԶԱՋԱՆԻ ՀԱՐԵՅԱՆԻ, ԱՆԺԵԼԱ ՎԱՂԻՆԱԿԻ ՀԱՐԵՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՎԱՂԻՆԱԿԻ ՀԱՐԵՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 126.62ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սիլվարդ Վարազդատի Ամիրխանյանի (ծնված 25.03.1954թ.), Վահան Միրզաջանի Հարեյանի (ծնված 01.01.1956թ.), Անժելա Վաղինակի Հարեյանի (ծնված 17.08.1982թ.), Անահիտ Վաղինակի Հարեյանի (ծնված 25.06.1984թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Շահումյան 6-րդ փողոցի հ.18 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1050.62քմ, որից Սիլվարդ Վարազդատի Ամիրխանյանին, Վահան Միրզաջանի Հարեյանին, Անժելա Վաղինակի Հարեյանին, Անահիտ Վաղինակի Հարեյանին սեփականության իրավունքով պատկանում է 624քմ մակերեսով հողամաս (վկայական տրված 17.09.1992թ. հ.3689): Օրինական հողամասին կից օգտագործվող 426.62քմ մակերեսով հողամասից օրենքի ուժով 300քմ մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 126.62քմ մակերեսով հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի միջոցով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 13.11.2008թ. հ.207, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 10.04.2009թ. հ.20/2-Ե/220 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 06.04.2009թ. հ.20-Ել-2759 եզրակացությունը, համաձայն որի Շահումյան 6-րդ փողոցի հ.18 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Շահումյան 6-րդ փողոցի հ.18 հասցեում Սիլվարդ Վարազդատի Ամիրխանյանի, Վահան Միրզաջանի Հարեյանի, Անժելա Վաղինակի Հարեյանի, Անահիտ Վաղինակի Հարեյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած

և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 624քմ մակերեսով հողամասին կից 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 426.62քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 300քմ մակերեսով հողամասից ավել օգտագործվող 126.62քմ մակերեսով հողամասը տարածագնահատման 7-րդ գոտու կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սիլվարդ Վարազդատի Ամիրխանյանին, Վահան Միրզաջանի Հարեյանին, Անժելա Վաղինակի Հարեյանին, Անահիտ Վաղինակի Հարեյանին։

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողների հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր։

4. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

5. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

6. Շահումյան 6-րդ փողոցի հ.18 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Շահումյան 6-րդ փողոցի հ.18 տուն>>։

7. Նախազգուշացնել հողօգտագործողներին, որ հողամասի առուվաճառքի պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման։

8. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սիլվարդ Վարազդատի Ամիրխանյանի, Վահան Միրզաջանի Հարեյանի, Անժելա Վաղինակի Հարեյանի, Անահիտ Վաղինակի Հարեյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

9. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա–Սեբաստիա թաղապետարան։

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

11. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ